ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N 25

ք. Կապան «11» հունվարի 2021թ

ՀՀ Սյունիքի մարզպետարանը ի դեմս գլխավոր քարտուղար է. Մարտիրոսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ (այսուհետ՝ դրամաշնորհ տրամադրող),, մի կողմից և «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը ՝ ի դեմս տնօրեն Վ.Արզումանյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ դրամաշնորհ ստացող), մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն Կատարողին պահպանման ծախսերի համար հատկացնում է 3773300 /Երեք միլիոն յոթ հարյուր յոթանասուներեք հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ , այդ թվում ԱԱՀ-ն՝ 628900 ՀՀ դրամ ՝

2.Գումարը տրամադրելու և ծախսելու կարգը

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1 1 կետում նշված նպատակներին համապատասխան :
2.2.Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պատվիրատուի ներկայացուցչի հնարավորությունը:
2.3. Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը ըստ հավելվածի փոխանցում է Կատարողի զանձապետական հաշվին:

3.Հաշվետվությունը

3.1. Հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Այլ դրույթներ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 25.12.2021թ :
4.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ , որը կնքվում է գրավոր:
4.3. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.Կողմերի իրավաբանական հասցեները

Դրամաշնորհ տրամադրող	Դրամաշնորհ ստացող
ՀՀ Սյունիքի մարզպետարան	«Կապանի Մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ
Ք.Կապան Նժդեհի 1	Ք. Կապան Նժդեհի 1
ՀՀ ֆին.նախ. գանձապետական	ՀՀ ֆին.նախ. գանձապետական վարչ
h/h 900311142	hh 900318000313
հհվհ 09415375	հհվհ 09409013
Մարտիրոսյան	Վ.Արզումանյան